«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

2024Թ. ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԱՍՈՎ (ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿԻ ՀԻՄՈՒՆՔԻ ՀԱՄԱԶԱՅՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

2024թ. գործունեության վերաբերյալ հաշվետվությունը հանրային միջոցներից ֆինանսավորումների մասով 1

Հաշվետվությանը կից ծանոթագրություններ 4

1. Կազմակերպության նկարագիրը և գործունեությունը 4
2. Կառավարման համակարգը 4
3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիր 4
4. Ֆինանսական հաշվետվությունների վավերացումը 5

ՖԻՆՍ ԱՈՒԴԻՏ ՓԲԸ

Հասցե՝ք. Երևան, Պարոնյան 9 բն. 12

Էլ. հասցե՝info@fins.am

Հեռ.՝+374 60 525 025

FINS AUDIT CJSC

Address:Yerevan, Paronyan str. 9 h. 12

Email:info@fins.am

Phone:+374 60 525 025

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ներկայացվում է «Հայաստանի շախմատի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաստանի շախմատի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ նաև Կազմակերպություն) կից ներկայացված 2024թ. տարեկան գործունեության վերաբերյալ հաշվետվությունը հանրային միջոցներից ֆինանսավորումների մասով, որը ներառում են «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված և ՀՀ ՊԵԿ նախագահի 2020թ. մայիսի 27-ի N 477-ն հրամանով սահմանված ՀՀ ՊԵԿ ներկայացվող հաշվետվության 7, 9, 11 դաշտերում լրացված տվյալները, ինչպես նաև հաշվետվությանը կից ծանոթագրությունները (այսուհետ միասին՝ ֆինանսական հաշվետվություն):
Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունը բոլոր էական առումներով պատրաստված է համաձայն ՀՀ ՊԵԿ նախագահի 2020թ. մայիսի 27-ի N 477-ն հրամանով սահմանված պահանջների:

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար» բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում. Հատուկ նպատակի հիմունքը

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությանն ենք հրավիրում Ֆինանսական հաշվետվությանը կից ծանոթագրություն 3-ին, որտեղ ներկայացված է, որ Ֆինանսական հաշվետվությունը պատրաստված է հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքով՝ ՀՀ ՊԵԿ-ի նախագահի 2020թ. մայիսի 27-ի N 477-ն հրամանով սահմանված պահանջների համաձայն, որի պատճառով այս Ֆինանսական հաշվետվությունը կարող է չհամապատասխանել այլ նպատակներով օգտագործման համար:

Ղեկավարության պատասխանատվությունը Ֆինանսական հաշվետվությունների համար

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքով ՀՀ ՊԵԿ-ի նախագահի 2020թ. մայիսի 27-ի N 477-ն հրամանով սահմանված պահանջների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ Ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն Ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ Ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ՖԻՆՍ ԱՈՒԴԻՏ ՓԲԸ

Հասցե՝ք. Երևան, Պարոնյան 9 բն. 12

Էլ. հասցե՝info@fins.am

Հեռ.՝+374 60 525 025

FINS AUDIT CJSC

Address:Yerevan, Paronyan str. 9 h. 12

Email:info@fins.am

Phone:+374 60 525 025

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ղեկավարությանը, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«ՖԻՆՍ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ

12 մայիսի, 2025թ.

ՀՀ, ք. Երևան

Տնօրեն Արմինե Ավագյան

«Հայաստանի շախմատի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն

2024թ. գործունեության վերաբերյալ հաշվետվությունը հանրային միջոցներից ֆինանսավորումների մասով

1. Հասարակական կազմակերպության՝	
1.1 Լրիվ անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ»
1.2 ՀՎՀՀ-ն	01515033
1.3 Գտնվելու վայրը	ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ ԽԱՆՋՅԱՆ ՓՈՂ. 50
1.4 Պետական գրանցման համարը	211.171.04293
1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	1993-06-17
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)10526464
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	www.chessfed.am
1.8 Էլեկտրոնային փոստը	info@chessacademy.am

2 Գործադիր մարմնի ղեկավարի՝

Անունը	Ազգանունը	Պաշտոնը
ՍԵՐԺ	ՍԱՐԳՍՅԱՆ	Նախագահ

3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը

Կազմակերպության նպատակները և խնդիրներն են՝ օրենքով սահմանված կարգով՝

- Նպաստել շախմատային շարժման ծավալմանն ու զարգացմանը
- Կոորդինացնել Հայաստանի Հանրապետության շախմատային կազմակերպությունների աշխատանքը
- Որպես շախմատի միջազգային ֆեդերացիայի (ՖԻԴԵ) անդամ, ՖԻԴԵ-ում և միջազգային այլ կազմակերպություններում ներկայացնել հայկական շախմատի շահերը
- Կազմակերպության գործունեության առարկան է՝ օրենքով սահմանված կարգով՝ Մշակել շախմատային մրցումների համակարգ և կազմակերպել դրանց անցկացումը
- Մշակել և հաստատել Հայաստանի Հանրապետության շախմատային կանոնագիրքը և միասնական մարզական դասակարգման նորմաներն ու պահանջները
- Կազմակերպել միջազգային, հանրապետական և այլ բնույթի շախմատային մրցաշարերի անցկացում Հայաստանի Հանրապետության տարածքում
- Ծավալել գովազդային գործունեություն
- Կազմավորել Հայաստնի շախմատի հավաքականները և կազմակերպել նրանց նախապատրաստությունը
- Կազմակերպել Հայաստանի շախմատիստների մասնակցությունը աշխարհի, Եվրոպայի առաջնությունների և միջազգային այլ մրցաշարերի
- Աջակցել տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով շախմատային նոր ծրագրերի ստեղծմանը
- Իրականացնել Հայաստանի շախմատի ֆեդերացիայի կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան ձեռնարկատիրական գործունեություն
- Կազմակերպել և տրամադրել օգնություններ
- Իրականացնել սույն կանոնադրությունից բխող և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն

4 Հասարակական կազմակերպության՝	
4.1 Անդամների թիվը	58
4.2 Կամավորների թիվը	
5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը	1

6. Իրականացված ծրագրեր՝

	6.1 Ծրագրի անվանումը	6.2 Վայրը	6.3 Նպատակը	6.4 Կարգավիճակը
1	«Շախմատի զարգացման և առաջխաղացման, 2024 թվականի ընթացքում ֆեդերացիայի անդամների, մարզիչների	Ք Երևան, Խանջյան 50	Շախմատի զարգացման և առաջխաղացման համար	Ավարտված

	ֆինանսական աջակցության» ծրագիր իրականացված «Լույս» Մշակութային, Գիտական, կրթական Հիմնադրամի նվիրաբերությամբ:				

7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	7.1 Ծրագրի անվանումը	7.2 Վայրը	7.3 Կարգավիճակը	7.4 Նպատակը	7.5 Հիմնական արդյունքները
1	«ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում» ծրագիր՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցությամբ	Ք Երևան, Խանջյան 50	Ավարտված	«Հայաստանի շախմատի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության կողմից մարզիկների պատրաստում և շախմատ մարզաձևի ՀՀ առաջնությունների և միջազգային մրցաշարերի անցկացում, ուսումնամարզական հավաքների կազմակերպում և միջազգային միջոցառումներին մասնակցություն	Առաջնությունների անցկացում

8. Տարեկան մուտքեր՝

8.1 Դրամական միջոցները	201,370,179
8.2 Գույքը	
Ընդամենը	201,370,179

9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ

Հ/Հ	9.1 Դրամական միջոցները	9.3 Ստացման աղբյուրները
1	75,181,100	ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցությամբ /ՀՀ կառավարությանն 28 դեկտեմբերի 2023 թվականի N 2323-Ն որոշմամբ 2024 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին, ՀՀ մարզաձևերի ֆեդերացիաներին 2024 թվականին տրամադրվող ֆինանս աջակցության չափը հաշվարկող հանձնաժողովի նիստի արձանագրությամբ/:
Հ/Հ	9.2 Գույքը	
1		
Ընդամենը	75,181,100	

10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝

10.1 Դրամական միջոցները	204,028,505
10.2 Գույքը	

Հ/Հ	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
Ընդամենը		204,028,505

11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝

11.1 Դրամական միջոցները	75,181,100
11.2 Գույքը	

Հ/Հ	11.2.1 Տեսակը	11.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		75,181,100

12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝

Հ/Հ	12.1 Տեսակը	12.2 Ստացված շահույթը	12.3 Շահույթի օգտագործումը
1	Մուտքավճարներ	0	Շախմատային մրցումների կազմակերպում և անցկացում
2	Մատուցված ծառայություններ	0	Շախմատային մրցումների կազմակերպում և անցկացում
3	Տոկոսագումար	0	Շախմատային մրցումների կազմակերպում և անցկացում

4	Ֆիդեյի կոչումներ	0	Շախմատային մրցումների կազմակերպում և անցկացում
Ընդամենը		0	
Նշումներ			
1	Աուդիտ է ենթարկվել 2024թ. գործունեության վերաբերյալ հաշվետվությունը հանրային միջոցներից ֆինանսավորման մասով:		
2	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ ՀԿ-ի 2024 թ հաշվետվությանը կից հայտնում ենք, որ 9.1 կետում արտացոլված 75,181,100 ՀՀ դրամն ամբողջությամբ ծախսվել է, որն էլ արտացոլվել է հաշվետվության 11.1 կետում:		

«Հայաստանի շախմատի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն
2024թ. գործունեության վերաբերյալ հաշվետվությունը
հանրային միջոցներից ֆինանսավորումների մասով
կից ծանոթագրություններ

1.Կազմակերպության նկարագիրը և գործունեությունը

«Հայաստանի շախմատի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2006թ.-ին (պետական գրանցման համար՝ 211.171.04293):
Կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) հասարակական միավորման տեսակ է, որում իրենց շահերի ընդհանրության հիման վրա օրենքով սահմանված կարգով միավորել են ֆիզիկական անձինք՝ հանրօգուտ շախմատային գործունեություն իրականացնելու նպատակով:
Կազմակերպությունը չունի ասոցացված կազմակերպություններ և համատեղ վերահսկվող միավորներ:
Կազմակերպության գործունեությաան նպատակները՝

- նպաստել շախմատային շարժման ծավալմանն ու զարգացմանը ,
- Կորդինացնել Հայաստանի կազմակերպությունների աշխատանքը ,
- որպես շախմատի միջազգային ֆեդերացիայի (ՖԻԴԵ) անդամ, ՖԻԴԵ-ում և միջազգային այլ կազմակրպություններում ներկայացնել հայկական շախմատի շահերը,
- մշակել շախմատային մրցումների համակարգ (կանոնագիրքը,միասնական մարզական դասակարգման նորմաներն ու պահանջները)և կազմակերպել դրանց անցկացումը,
- իրականացնել իր կանոնադրական նպատակներին համապատասխան գործունեություն:

Աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակը 2024թ. կազմել է 2 անձ:
Կազմակերպության գտնվելու վայրի հասցեն է ՝ ՀՀ, ք.Երևան,Խանջյան փող.,շ. 50:

2.Կառավարման համակարգը

Կազմակերպության կառավարումը հիմնված է՝ կոնֆերանսի (ֆեդերացիայի կառավարման բարձրագույն մարմնի),նախագահության (ֆեդերացիայի նախագահի),խորհուրդի և գործադիր մարմնի (գործադիր տնօրենի) գործառույթների իրականացմամբ:

3.Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիր

3.1 Ֆինանսական հաշվետվությունը ներառում է 2024թ. գործունեության վերաբերյալ հաշվետվությունը հանրային միջոցներից ֆինանսավորումների մասով , ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը և այլ բացատրական ծանոթագրությունները:
Ֆինանսական հաշվետվությունը պատրաստվել է համաձայն «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ Պետական Եկամուտների Կոմիտեի Նախագահի կողմից 2020թ. մայիսի 27-ի թիվ 477-Ն հրամանով հաստատված պահանջների:

3.2 Ֆինանսական հաշվետվությունը եկամուտների (մուտքերի) և ծախսերի (ելքերի) վերաբերյալ հատուկ նպատակի հիմունքի համաձայն պատրաստված հաշվետվություն է:
Կազմակերպությունը ֆինանսական հաշվետվությունները պատրաստել է՝ կիրառելով հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքը: Դրամարկղային հիմունքը հաշվապահական հաշվառման այլ համապարփակ հիմունք է, որը նախատեսված չէ Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին համապատասխանության համար: Այս հիմունքի համաձայն եկամուտները և ծախսերը ճանաչվում են, երբ դրամական միջոցները ստացվում են կամ կատարվում են վճարումներ:

3.3 Հայաստանի Հանրապետության արժույթը ՀՀ դրամն է, որը Կազմակերպության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունը ցույց է տրվում հազար դրամներով՝ ստորակետից հետո տասնորդական նիշով:

3.Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիր(շարունակություն)

3.4 Արտարժույթով գործառնությունը սկզբնապես ճանաչման պահին հաշվառվում է ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ սփոթ փոխանակման փոխարժեքը:
Որպես սփոթ փոխանակման փոխարժեք ընդունվում է արժութային շուկայում ձևավորված արտարժույթների միջին փոխարժեքը:

4.Ֆինանսական հաշվետվությունների վավերացումը

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են հրապարակման համար 2025թ. մայիսի 12-ին՝ գործադիր տնօրեն Ա. Գրիգորյան և գլխավոր հաշվապահ Ա. Իսկանդարյանի կողմից:

Գործադիր տնօրեն — Արմեն Գևորգյան

Գլխավոր հաշվապահ — Հաշվապահական ծառայություններ մատուցող ընկերություն՝ Աստղիկ Իսկանդարյան ԱՁ Աստղիկ Իսկանդարյան